

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԵՒ ՅԵՂԱ-
ՓՈԽԱԿԱՆ ԲՈՄԱՆՏԻԶՄ ¹⁾

Բոմանտիզմի տակ պոլիտիկայի մէջ սկզբում հասկանում էին՝ դէպի անցեալը դարձած ցնորք կամ ութոպիա: Ձգտում՝ վերակենդանացնել անցած ժամանակների հաստատութիւնները, վերակենդանացնել այն ժամանակ, երբ բոլոր ջանքերը հէնց իրանց հիմքերով հակասում են այդ հաստատութիւններին. բոմանտիզմը—դա հին-հին դարուց յիշատակների ֆանտաստիկ ջատագովումը, անցեալի գեղեցիկ լուսապսակով ոգևորումն է:

Սակայն բոմանտիկ մտածողութիւնը բնաւ անխղիւրօրէն կապում չէ անցեալի պաշտամունքի հետ: Անիրական, հանգամանքների նկատառութեամբ չպատճառարանուածի իւրաքանչիւր պաշտամունք, անկշռադատ և առանձնայատուկ պայմանները հաշուի չառնուած տեղափոխում միջոցների կամ ձգտումների—իսկապէս բոմանտիզմ է: Եթէ Ֆրիդրիխ Վիլհելմ IV-րդի կողմից բոմանտիզմ էր—ցանկալ ճանապարհների հաղորդակցութեան և խոշոր արդիւնագործութեան ծաղկման ժամանակներում վերադարձնել ֆէօդալական օրերի սովորութիւններն ու հիմնարկութիւնները, պակաս բոմանտիզմ չէ 1848 և 1871 թ. թ. ֆրանսիական յեղափոխականների ցանկութիւնը՝ նորից լոյս աշխարհ բերել 1792 թ. յեղափոխական կոմունան և ստիպել, որ նա խաղայ այն դերը, որ նա կատարեց

¹⁾ Այս յոդուածի հեղինակը՝ Էդուարդ Բէրնշտայնը՝ տաղանդաւոր հրապարակաօս և յայտնի քաղաքական գործիչ է, ծնունդ է 1850 թ. հրէական ընտանիքում և պատկանում է գերմանական սոցիալ-դեմոկրատիական կուսակցութեան: Մի ժամանակ նա արտաքսուած էր Գերմանիայից, մեղադրուելով «կայսրին վերաւորանք հասցնելու մէջ»։ Դ. կուսակցութեան ամենալուրջ հրատարակութիւնները նրա խմբագրութեամբ են լոյս տեսել: 1898 թուականից նա սկսում է մի շարք խիստ քննադատական յոդուածներ մարքսիզմի և ս. գ. կուսակցութեան տակտիկայի մասին. բանակիւ է ծագում: և գերմ. ս. գ. բաժանում է երկու թերթ. բերնեսայնսկուն կամ բեկիզիոնսկների և օրբոյնսկերի: Բերնշտայնը դատախօսութիւն է արել և հայկական հարցի մասին, որ լոյս է տեսել առանձին բրօշուրով. «Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas»։

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ամենազօրեղ զարգացման տարիներում։ Ոչ այլ ինչ էր, եթէ ոչ բոմանտիզմ՝ Ռուսիայում 1881 թ. մարտի 1-ին աջողուած փորձից յետոյ՝ Ֆրանսիայում, Սպանիայում, Աւստրիայում, և այլն տեղերում, անցեալ դարի ութսունական թուականներին, ուժանակով սպանութիւններ անելու փորձերից շատերի հիմքում։ Չնայած որ Ռուսաստանում յիշած սպանութիւնը ոչ միայն չնպաստեց յեղափոխական շարժման յաղթանակին, այլ ընդհակառակը՝ եւրոպական դադափարների ազդեցութեան մատչելի Ալէքսանդր II-ի փոխարէն դահ բարձրացաւ խիստ օրթոդոքս-պահպանողական մի ցար, որ անխնայ դաժանութեամբ հալածում էր ամեն ինչ, որ թէկուզ ամենահեռաւոր կերպով յիշեցնում էր եւրոպական քաղաքական կեանքի ժամանակակից կարգերը,—այնուամենայնիւ ռումբի միջոցով այդպիսի անազին հետեանքի հասնելու հէնց միայն միտքը միամիտ-զգայնական կամ հերոսաբանական տրամադրուած ուղիներով վրայ արբեցնող ներգործութիւն էր անում։ Ծագեց ուժանակի (դինամիտ) պաշտամունքը (կուլտ), և արժէ միայն հայեացք ձգել նրա զրականութեան մէջ, որպէսզի բոմանտիկ անահաւատութեան բոլոր գծերը ակներև լինեն։ Ուժանակը ամենակարող է, այդ պայթուչութիւնի միջոցով կարելի է հիմնադատակ անել ամբողջ ներկայ սոցիալական կեանքը։ «Erlösungsmedizin ist Nitroglycerin»¹⁾ բանաձևը (Ֆորմուլը 1) շատ շատերի հաւատածն էր, և հարկաւորուեց շատ տարիների փորձը, որպէսզի վարկաբեկ անուի նա։ Այսօր ուժանակը, կուուելու դրանման միւս գործիքների հետ միասին, աւերիչ միջոցների շարքում, որոշ պայմաններում յեղափոխական կուում կարող է նոյն նշանակութիւնը ունենալ, ինչ վաղուց իվեր յատկացրուած է դրանց՝ պետութիւնների իրար դէմ վարած պատերազմներում։ Սակայն այլևս դոյութիւն չունի այն՝ մինչև ծուծը բոմանտիկ հասկացողութիւնը, որ իբրեթէ այդպիսի միջոցներով կ'աջողուի փոխել քաղաքական և տնտեսական մաքառման բոլոր ձևերը, այնպէս որ այդ անարեկիչ միջոցների հետ համեմատած՝ երկրի տնտեսական զարգացման աստիճանը, բանուորների քաղաքական պրոֆեսիօնէլ զարգացումը իբր թէ դառնում են աննշան գործօններ։

Բայց այդ հասկացողութեան հետ միասին չքայցաւ արդիօք քաղաքական կեանքից կամ գէթ սոցիալիստական շար-

1) Փրկութիւնը—նիտրոգլիցերինի (ուժանակ շինելու նիւթ) մէջ է։
Ծ. Թ.

ժուժից և բոմանտիկ մտածողութիւնը առհասարակ կամ այդ կերպ մտածելու հակումը: Բոլորովին ոչ: Իւրաքանչիւր յարմար դէպքում մենք կրկին հանդիպում ենք նրան, թէկուզ կերպարանափոխուած ձեւի տակ: 1905 թ. յունուարից Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական վիթխարի գործադուլները, ի միջի այլոց, այն հետեանքը ունեցան որ Գերմանիայում քաղաքական գործադուլի գաղափարը այնպիսի ժողովրդականութիւն ստացաւ, ինչպիսին անկարելի էր երևակայել դեռ մի տարի առաջ: Ինքն ըստ ինքեան այդ Ֆալտը միայն կարելի է շնորհաւորել, որովհետեւ քաղաքական գործադուլը, տնտեսականի նման, մաքառւած գործիք է, որ բանտորական դասակարգը այս կամ այն պայմաններով կարող է հարկադրուած լինել գործադրելու. և այդ պատճառով գործադուլի մտքի հետ անհրաժեշտ է որ նա առաջուց ընտելանայ: Ինձ բնաւ չի անհանգստացնում և այն, որ այժմ, երբ այդ գաղափարը ժողովրդական դաւաւ, նրան ձեռք բերելու առանձնաշնորհումը իւրացնում են իրանց մարդիկ, որոնք մի քիչ առաջ ներքա դէմ էին դուրս եկնում կամ այդ գործադուլը թոյլատրում էին այնպիսի վերապահումներով, որոնք գործնականապէս համանիշ էին յետաձգել այն ad calendae graecas ¹⁾: Մարդ երբէք չպէտք է իր ուրախութիւնը թունաւորի չհաւատացողների դարձի առիթով նրա համար, որ նրանցից ոմանք իրանց ընտրեալներին երևակայում հրաւիրուածների մէջ... Այդպիսի երեոյթների պակասութիւն պատմութեան մէջ երբէք չի եղել: Յիւրի-խում ինձ անուանում էին մայր Գերմանիայի քաջամարտիկ զաւակներից մէկին, որ շվեյցարական քաղաքացի լինելու իրաւունքը ստանալուց յետոյ, հէնց նոյն համայնական ժողովում, որ նրան շվեյցարական քաղաքացիութեան գիրկը ընդունեց, երբ մի այլ ուրիշի նման խնդիրքն է քննուելիս հղել, խօսք է պահանջել և յայտնել, թէ շտէ հէրիք է օտարներին ընդունել և պէտք է դադարեցնել այդպիսի քայլեր անելու... Վերջին ժամանակներս ես յաճախ եմ յիշում այդ դոչաղին: Առանձին դէպքերում իհարկէ վատ չէ յիշեցնել այդպիսի նոր ներկուածնութիւն, թէ նրանց վրայի ներկը դեռ չի չորացել, բայց ընդհանուր առմամբ չարժէ որ մարդ փչացնի իր տրամադրութիւնը այդպիսի կողմնակի երեոյթներով, մինչև որ չափը անցուած չէ գործի էութեան մէջ. և նոր ճշմարտութեան քարոզը չի ստացել նոր նախապաշարմունք ստեղծող կամ բոմանտիկ բնաւարու-

1) Հայերէն դրան ասում են «էշի գառկին»:
Յունուար, 1906.

Թիւն տուող մի ձև: Այն ժամանակ արդէն կատակ անել չի կարելի և պէտք է լրջօրէն խօսել:

Հէնց այդ մտքով, ըստ իս ¹⁾, պէտք է հասկանալ Ֆ.— Էլմի, Ֆրոմմի և Լեշէի 1905 թ. նոյեմբ. 23-ից գրուածքը «Hamb. Echo»-ի մէջ:

Ներքոյ ստորագրեալներս մեր պարտքն ենք համարում կուսակցութեան և ընտրողների առջ անել հետեւեալ ազդը.

Վերջին շարաթիւրի ընթացքում ինչպէս կուսակցութեան մամուլի մէջ, այնպէս և կուսակցութեան ժողովներում տարածում են իբր կուսակցութեան մեծամասնութեան անունից այնպիսի հայեացքներ, որոնք մեր համոզմամբ խիստ նախանում են կուսակցութեան շատ կարեւոր որոշումների ճշգրիտ տեքստին և տեղեկեցին: Մենք նախ և առաջ ի նկատի ունենք Նիայում ընդունուած որոշումը ընդհանուր քաղաքական գործադուլի վերաբերմամբ:

Այդ որոշումը պատճառաւորաբար իր վերջնական ձառում Բերլին, որպէսզի ցրի բոլոր կասկածները և այդ առիթով ծագած տեղեկեցները, պարզօրէն ընդգծեց որ այդ որոշումը չի պարտաւորեցնում «որոշ գէպերում գործադուլ յայտարարել ամեն տեսակ պայմաններում, ինչ գնով էլ այդ նստելու լինի»: Այդ երկիւղները, Բերլին կարծիքով ոչ մի հիմք չունեն. կուսակցական համաժողովին առաջարկում է միայն համաձայնուել «որպէսզի հարկաւոր գէպերում, յայտնի պայմաններում» կուսակցութեան առաջնորդները միանան պրոֆեսսորին և կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ և քննութեան առնեն՝ մասսային քաղաքական գործադուլի զաղափարի իրագործումը, ենթադրելով նրա կարելիութիւնը հաստատուած: Այդ խօսքերը ընդհանուր հաւանութիւն գտան կամ առնուազն ամենափոքր ընդդիմախօսութիւն անգամ չը յարուցին:

Սակայն չնայած դրան, կուսակցութեան մէջ վերջին ժամանակ ծագել է նոր ուղղութիւն, որ աչքի է ընկնում չափազանց վտանգաւոր, նոյնիսկ կուսակցութեան համար ուղղակի կորստարեք յեղափոխական բռնատիրգմով. այդ վկայում է բէալ մտածողութեան ամենաչնչին նշոյլի բացակայութիւն և կանգնած է բացարձակ հակասութեան մէջ՝ պատմութեան վրայ մատերիալիստական հայեացքի հետ, որ գիտնականօրէն հիմնաւորել է Կարլ Մարքսը: Վերեւ յիշած նոր ուղղութիւնը մօլեռանդ նախանձախնդրութեամբ ձգտում է Նիայի որոշումը բացատրել այն մտքով, որ իբրեւ թէ քաղաքական գործադուլը սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան համար անխուսափելի գործ է թէ ոչ այսօր—գէթ վաղը պէտք է կազմ պատրաստ լինել այդ գործադուլի համար: Իւրաքանչիւրին ով չի համակրում դրանց յեղափոխական բռնատիրգմին՝ դրանք հայածում են կասկածանքով թէ այդպիսիները ձգտում են սառցնել մասսայի տրամադրութիւնը, թէ պատկանում են բեվիզիոնիստներին, որոնք ծաղրում են յեղափոխական ոգին կուսակցութեան մէջ ²⁾: Այդ պրոպագանդի տեսակը ամբողջապէս և նրա բոլոր միջոցները ոչնչով չեն տարբերում անարխո-սոցիալիզմից:

1) Է. Բերնշտայնի այդ յօդուածը տպուած է եղել Socialistische Monatshefte ամսագրի այս տարուայ յունուարի տետրակում. մենք օգտուել ենք «P. B.» թարգմանութիւնից: Մ. Թ.

2) Տես յօդուածի սկզբում գրուած ծանօթութիւնը բեվիզիոնիստների մասին: Մ. Թ.

Բանուորների պրոֆեսիօնէլ 2) կազմակերպութեան անհրաժեշտութիւնը և նրա իբր էական գործօնի նշանակութիւնը բանուորական դասակարգի պատական շարժման մէջ՝ ճանաչուած էին բոլոր սոցիալ-դեմոկրատական համաժողովներէց. իսկ նրայի կուսակցական ժողովը պարտաւորութիւն դրեց կուսակցութեան՝ իւրաքանչիւր անդամի վրայ՝ նպաստել պրոֆեսիօնէլ միութիւնների ձգտումներին և նպատակներին: Սակայն նոր ուղղութեան ներկայացուցիչները համար պրոֆեսիօնէլ կազմակերպութիւնների սահմաններում ամեն մի գործունէութիւն սիդիֆեան աշխատանք է, նրանցից հէնց այն ևս լսում թէ «պրոֆեսիօնէլ միութիւնները անգոր են» և այլ նման ֆրազներ, որոնք վնասում են պրոֆեսիօնէլ շարժման շահերին: Նմանապէս և պարլամենտական գործունէութեան գնահատման նկատմամբ այդ ուղղութիւնը այնպիսի դիրք է բռնել որ հակասում է սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան բոլոր կոնգրեսները որոշումներին: Այդ նոր ուղղութեան ներկայացուցիչները խօսում են և գրում «պարլամենտարիզմի որդորմլի ունայնութեան» մասին, «պարլամենտական ճահճի նեղ տեսակէտի» մասին, յայտնում են թէ «պարլամենտիզմի վրայ հիմնուած մեր բոլոր հաշիւները աւագի վրայ են շինուած» և այլն:

Այդ ուղղութեան դէմ մենք բողոքում ենք իբրեւ կուսակցութեան անդամներ և նրա ներկայացուցիչները բայտատալում և յայտնում ենք որ լիշեալ պրոպագանդը չի համապատասխանում կուսակցութեան և բանուորական շարժման շահերին:

Անուանուած սոցիալ-դեմոկրատները «Vorwärts»-ին գրած նամակում յայտնում են թէ իրանց այդ ազդի իբր մերձաւոր ստիթ ծառայել է Բոզա Լիւքսեմբուրգի ճառը քաղաքական գործադուլի մասին: Արդարութիւնը պահանջում է նկատել որ Բոզա Լիւքսեմբուրգը վաղուց ասում է այն, ինչ ասել է Համբուրգում: Սակայն մինչև այժմ նրա ճառարանութիւնները ոչ մի ազդեցութիւն չեն արել դերման սոցիալ-դեմոկրատիայի գործնականի վրայ, և այդ բաւական էր որ նրանց նշանակութիւնը չտրուի: Այլ բան է հիմա, երբ Բոզա Լիւքսեմբուրգ դառել է ա.-դ. կուսակցութեան կենտրոնական օրգանի առանձնաշնորհաւ անդամը և երբ կարող է այնպէս թուալ թէ նա խօսում է ոչ իբր մասնաւոր անձ, այլ իբր կուսակցութիւնից առանձին լիազօրութիւններ ստանձնած մի ներկայացուցիչ:

Սակայն ի՞նչ կարող է հրապուրել բանակուիւր Բոզա Լիւքսեմբուրգի հետ: Եւ կը փորձեմ միայն պատասխանել կուսակցութեան մէջ այժմ դրած հերթական հարցին—ուսական անցքերի կէրառութեանը Գերմանիայում:

2) Պրոֆեսիօնէլ նշանակում է արուեստակցական. միեւնոյն գրադմունքով կամ արուեստով պարապողները միեւնոյն պրոֆեսիայի (արուեստի) են պատկանում. ամեն մի պրոֆեսիա ունի իր առանձին՝ պրոֆեսիօնէլ շահերը:

Ծ. Թ.

II

Այս հարցի լուծման ժամանակ շատ հեշտ է ընկնել թէ մէկ և թէ միւս ծայրայեղութեան մեջ: Բռնաճնտրիկի հակապատկերը ֆիլիստեբն է, որ այնքան հրաշալիօրէն ընդորոշուած է Գեօթէի «Փառուստ»-ում, ինչպէս միմարդ որ երեակայում է թէ այն ժամանակ երբ ցանկապատի ետեւում ամեն ինչ տալն ու վրայ է լինում—նրա մօտ, տանը, ամեն ինչ կարող էր շարունակուել հին կարգով: Զէ որ Գեօթէի աչքերի առջև ծաւալուած էր Քրանսիական յեղափոխութիւնը որ Գերմանիայում անգամ չառ հին կարգեր փոխեց: Եւ ուսական յեղափոխութիւնը, իհարկէ, առանց խոր ազդեցութեան չի անցնիլ դերմանական քաղաքականութեան վրայից, սակայն նրա ազդեցութիւնը կարող է երևան գալ և ոչ այժմ: Նմանապէս և ուս բանուորների ժամանակակից կռիւը, որքան և աննորմալ լինեն դրա պայմանները, մեզ կարող է շատ բան սովորեցնել: Իբրև տարերային շարժում, այդ կռիւը յաճախ ընթանում է հակառակ բոլոր ընդունուած աւանդութիւններին, սակայն այնուամենայնիւ անհրաժեշտ է որոշել թէ ի՞նչը պէտք է բացառապէս այդ անսովոր պայմաններին վերադրել և ի՞նչ նպատակայարմար է կամ հնարաւոր է միմիայն այդ իսկ պայմաններում:

Ուրիշները արդէն մատնանիշ են արել մի կողմի վրայ, այդ այն է որ ուսաց քաղաքական գործադուլը հէնց սկզբից վայելում էր բուրժուական դասակարգերի չափազանց համակրանքը: Արդեօք երկար կը տևի այդ համակրանքը—դա այլ հարց է: Արդէն նշաններ կան, որ այդ համակրանքը տեղ տեղ նուազում է: Սակայն կարևոր է նշանակել և մի այլ կողմ. ուս բանուորների առջև մի կողմից կանգնած է միանգամայն վարկազուրկ ու թուլացած պետական իշխանութիւնը, իսկ միւս կողմից՝ կազմակերպութիւնից և հմուտ ղեկավարներից բոլորովին զուրկ բուրժուակիան: Ռուսաստանի ներկայ դրութիւնը — դա համարեալ կատարեալ անիշխանութեան մի դրութիւն է: Բոլորն էլ գիտակցում են որ հին ինքնակալութիւնը այլևս պիտանի չէ, սակայն ոչ ոք չգիտէ թէ ի՞նչ պէտք է փոխարինի նրան, ինչ կը փոխարինի: Ոչ ոք չի հաւատում այն բանին ինչ որ գոյութիւն ունի, սակայն ոչ ոք էլ չգիտէ թէ ի՞նչ կը լինի իսկոյն: Թէ այդ մերձաւոր ապագան Ռուսաստանի տընտեսական կառուցուածքի (ստրուկտուր) և կուլտուրական դարգացման պայմաններում չի կարող լինել սոցիալիստական հասարակութիւն, այդ բանի մէջ սկի չեն էլ երկրայում ուս սո-

ցիալիստների մեծ մասը, հէնց Բողա Լիւքսեմբուրգն էլ է այդ ընդունում: Բայց եթէ ոչ սոցիալիզմը, ուրիշ ինչ: Ո՞ր կուսակցութիւնը նախ և առաջ կը կանգնի կառավարութեան գլուխը: Այդ ոչ որ չի կարող դուշադել: Ամեն բան կարող է պատահել, բայց ոչինչ չի կարելի ասել վստահօրէն:

Թէ այդ դրութեան մէջ ինչպէս կը սկսի գործել պետական հին ապարատը—դժուար չէ երեւակայել, մանաւանդ եթէ յիշել որ նա բաղկացած է մի չինովնիկութիւնից, որ երբէք աչքի չի ընկել պարտականութեան գիտակցութեան առանձին ամբողջութեամբ և միայն այն պատճառով էր պատրաստակամութեամբ հպատակում բարձրագոյն իշխանութեան, որ այնտեղ նա տեսնում էր երկաթէ բռունցք: Իր առջև չտեսնելով այդ երկաթէ բռունցքը ուստի չինովնիկութիւնը կորցնում է իր բռնիք ընթացքի ուղեցոյցը: Այդ է պատճառը այն բազմաթիւ դէպքերի, երբ մասսայի առջև պոլիցիականները ընկճուել անձնատուր են եղել: Ի՞նչպէս այդ պոլիցիականները մաքառեն մասսայի դէմ, երբ նրանք հաւատացած չեն թէ նաև վաղը կառավարութիւնը նրանց մէջքում պինդ կանգնած կը լինի և կը պաշտպանի իրանց, կարող կը լինի իրանց պաշտպանել: Ռուսաստանի շատ քաղաքներում այժմ իրապէս տիրապետում է մի տեսակ բռունցքի իրաւունքը. իւրաքանչիւրը անում է, ինչ որ ցանկանում է և հասարակական կեանքը, որ չափով նա առհասարակ շարունակում է հին ձևով գործել, գոյութիւն ունի միայն սովորութեան վրայ յենուելով:

Այդպիսով քաղաքական գործադուլը Ռուսաստանում դառնել է համարեա առօրեայ երևոյթ, բայց դրա հետ միասին թուլանում է և նրա ազդեցութիւնը: Պոլիտիկայի մէջ ամեն բան մաշւում է, ամենաուրաժայր նիզակներն էլ ժամանակի հետ բթանում են: Երբ ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ ահաբեկման (տերրոր) միջոցով սարսափեցնելու և վախեցնելու սխտեմը հասաւ իր զարգացման գագաթնակէտին—նա դադարեց երկիւղ ազդել: Այդ սխտեմի կողմնակիցները իրանք յոգնեցին, և գիւտօտինան, եթէ կարելի է այդպէս ասել, ձանձրացրեց նրանց: Զղերը բթացան, մարդիկ համակուեցան մի տեսակ ֆատալիզմով: Միայն թերմիդորը ¹⁾ մտքրեց նոր գլըրդիւ, բայց այդ յեղաշրջումը յեղափոխութեան թուլանալն էր արդէն ցոյց տալիս:

1) 1794 թ. յուլիսի 27, երբ ընկաւ յեղափոխութեան բռնակալ Բոքսպիեռը և վերջ տրուեց նրա յարուցած կատաղի տերրորներին:

Ո՞ւմ դէմ է ուղղուած քաղաքական գործադուլը: Կառավարութեան դէմ: Ո՞ւմ է նա հարուածուած—Մասսաժուէթիւնը, բայց առաւել ևս մեծ չափով և բուրժուական հասարակութիւնը, ապա ուրեմն միջնորդաբար և բանուորութիւնը: Դրանով արդէն ասուած է որ քաղաքական գործադուլը կարող է յաջողութիւն ունենալ միմիայն որոշ պայմաններում, այն է. երբ գործադուլը բանուորները անում են հասարակութեան կամ նրա գերակշռող մասի հետ միասին կամ երբ բանուորները այնքան ոյժ ունին որ կարող են ստիպել որ թէ հասարակութիւնը և թէ կառավարութիւնը հպատակուին իրանց: Այդ ալտերնատիվի վրայ է յենում այժմ ռուսական յեղափոխութեան վիճակը, որքանով նա որոշուած է բանուորների մասնակցութեամբ: Կառավարութիւնը ընտրել է սպասողական դեր: Նա ցանկալի է համարում որ դեռ մինչև Դումայի բացումը կատարուի այն, ինչ որ եղաւ Ֆրանսիայում միայն ազգային ժողովի բացումից յետոյ: Քաղաքական գործադուլի գրաւչութիւնը կը թուլանայ, հաւատը դէպի նրա ստեղծագործական ոյժը կը կորուսուի և հետաքրքրութիւնը դէպի նա կը բթանայ: Հետևից դժուար է վճռել թէ այդպիսի տակտիկան որքան աջողութիւն կ'ունենայ: Սակայն, ըստ երևոյթին, ազգային ներկայացուցչութեան յետաձգումը յեղափոխական ոյժերի լուրջ կորուստ է, եռանդի ահագին պաշարի մսխում:

Ֆրանսիայում ազգային ժողովի գործունէութեան առաջին ամիսներից յետոյ նկատելի էր տնտեսական բաւական խոշոր կենդանութիւն. ազգային ներկայացուցչութեան ձևը առած աղատական միջոցները արգասաւոր կերպով ազդեցին առևտրի և արդիւնագործութեան վրայ, բարձրացան նախաձեռնութիւնը և վարկը: Ռուսաստանում մենք հակառակն ենք տեսնում. առևտրի և արդիւնագործութեան մէջ աւելի և աւելի մեծ դադար վարկի և նախաձեռնութեան աւելի զօրեղ անկում: Ով է կարող այդպիսի պայմաններում աւելի երկար դիմանալ—ինքնակալութիւնը թէ դեռևս ընդդիմադիր բուրժուազիայի լայն մասսան, դրանից է կախուած լինելու կռուի մերձաւոր ելքը:

Այդ բոլորից երևում է թէ որքան հեշտ է սխալուել ժամանակակից Ռուսաստանի քաղաքական գործադուլի նշանակութիւնը գնահատելիս: Օրէց օր կարող է փոխուել այդ նշանակութիւնը: Այն հեշտութիւնը որով այդ գործադուլները կադմուտ են, այն յանկարծակիութիւնը, որով երբեմն նրանք ծագում են—միայն մոմենտի ընդհանուր ընտրուում են տալիս, բայց չեն կարող ծառայել իբրև չափ բանուորական դասակարգի սեփական ոյժերի, այլ աւելի շուտ միայն նշան են

միւս դատակարգերի և կառավարական իշխանութեան ժամանակաւոր թուլութեան և անվճռողականութեան:

Եթէ արդէն անպատճառ կզրակացութիւն անել քաղաքական գործադուլի նշանակութեան մասին, դուք է կարելի լինի միայն ասել թէ այժմ Ռուսաստանում տիրող նման պայմաններում ամեն տեղ հեշտութեամբ կարելի կը լինէր յայտարարել այդպիսի գործադուլներ և թէ նրանք ամենուրեք նոյնպիսի արձագանգ կը գտնէին: Իսկ վերջնական ազդեցութեան մասին ոչինչ չի կարելի ասել, որովհետեւ դեռ դժուար է տեսնել որտեղ են Ռուսաստանում այժմեան գործադուլների սահմանները: Նրանից որ ծագող գործադուլներից մի քանիսը շատ կարճ ժամանակ անց պէտք է դադարեն, կարելի է միայն եզրակացնել որ այդ սահմանները անկասկած գոյութիւն ունեն: Եւ ինչպէս կարող է այլ կերպ լինել: Մենք գիտենք թէ ինչ ահագին միջոցներ է պահանջում իւրաքանչիւր երկարող գործադուլը հէնց լոկ գործադուլ անողներին քիչ-միչ սովորեցնող պաշտպանելու համար: Մինչդեռ վատ կազմակերպուած և վատ վարձատրուող ռուս բանուորների բազմութիւնը ուղղակի սեփական ոչ մի աղբիւր կամ բնասուբա չունի: Տարածուած և երկարատեւ գործադուլի դէպքում նրանց առջև երկու աղբիւր կայ. լայն չափերով միւս հասարակական դասակարգերի կողմից յօժարակամ աջակցութիւնը կամ—խանութների ջարդ ու թալանը և այլն:

Սակայն վերջին միջոցը երկար ժամանակով չի օգնի, իսկ առաջինը ենթարկում է գործադուլը հասարակութեան միւս դասակարգերի բարի կամքին, այսինքն հնարաւոր է դարձնում միայն այն դէպքում և այն չափով, որ չափով գործադուլը ծառայում է միւս դասակարգերի նպատակներին:

Սակայն այդպիսի կամ նման պայմանների մասին, որոնք այժմ տիրում են Ռուսաստանում, Գերմանիան հարկ չունի ծանրանալ: Չնայած մեր «բարձր շրջանների» կողմից դէպի զանազան անակնկալները ունեցած բոլոր հակումներին, կարելի է ամենամեծ անհաւանականութիւն համարել այնպիսի մի պատերազմ, որ նոյն չափով ուժասպառ անէր գերմանական կայսրութեան ոյժերը, ինչ չափով ռուս-ճապոնական՝ Ռուսաստանի ոյժերը, և նոյն չափով անժողովրդական լինէր: Հէնց միայն քաղ. կուսակցութիւնների և կուսակցական կեանքի դարգացումը ապահովում է Գերմանիան ռուսականի նման պայմանների վրահաստմից: Եթէ Ռուսաստանում վաղուց ի վեր գոյութիւն ունենային կազմակերպուած կուսակցութիւններ և կուսակցական պայքար, ինչպէս այդ մշտական երևոյթ է դարձել Գերմանիայում, այնտեղ էլ ըմբռնումը հազիւ թէ այդ տեսակ

անիշխանութեան հասնէր: Արսուլիտիզմի (միահեծանութեան) քամակում միշտ կանգնած է քաօսը: Նրա ստեղծած արուեստական կարգը կործանուած է արսուլիտիզմի հետ միասին: Այդ պատճառով ոչ առանց հիմքի ազատութիւնը անուանուած էր պահպանողական գործօն: Որքան մի երկիր աւելի մեծ քաղաքական ազատութիւն է վայելում, այնքան աւելի ղեքը է նախորդ քաղաքական ընդհարումներին: Իհարկէ, պրուսականացած Գերմանիան դեռ շատ հեռու է՝ քաղաքականապէս ազատ երկիր լինելուց: Նրա մէջ հէնց միայն այնքան ազատութիւն կայ, որքան անհրաժեշտ է քաղաքական կուսակցութիւնների զարգացման համար: Եւ եթէ կատարեալ իրաւունքով կարելի է ասել որ՝ եթէ Գերմանիան ազատ երկիր լինէր, նրա քաղաքական կուսակցութիւնները շատ կողմերից այլ կերպարանք կ'ունենային, բայց և այնպէս՝ կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող ընդհանուր ընտրողական իրաւունքը այն ազդեցութիւնը ունեցաւ, որ կուսակցութիւնները աւելի յարմարուեցան ժամանակակից սոցիալական կուռին, քան այդ հնարաւոր կը լինէր, օրինակ, Պրուսիայի երեք-դասեան ընտրողական սիստեմի ժամանակ: Մշուշապատութիւնը—գա մի պակասութիւն է, որի համար ամենից քիչ կարելի է մեղադրել գերմանական կուսակցութիւնները: Յամենայն դէպս մեր կուսակցութիւնները ոչ մի կերպ չի կարելի համեմատել այն քաօսի հետ, որ բնորոշ է Ռուսաստանի ներկայ դրութեան համար: Եւ նմանապէս նաև մեր պետութիւնը բոլորովին այլ կերպարանք ունի, քան ռուսականը: Մեր բիւրօկրատիան չի կարելի, իհարկէ, մինչ երկիրք բարձրացնել, սակայն յամենայն դէպս նա բոլորովին այլ տեսակի է, քան ռուսականը: Մերոնց տրագիցիաները բոլորովին այլ են, և շատ յատկութիւններ, որոնք չափազանց թոյլ են զարգացած ռուս չինովնիկի մէջ, մերոնց մէջ, գուցէ, չափազանց են զարգացած: Գերմանացիին—բնածին պաշտօնեայ է, և ինչ հաւատքի էլ է նա լինում է լինի, բայց պետութեան նա հաւատում է: Մեր առջև՝ Գերմանիայում կուռ շաղկապուած պետական օրդանիզմ կայ, որ դեռ կարող է վստահ լինել իր պաշտօնեաների հաւատարմութեան:

Այդպիսի մի պետական օրդանիզմ, լաւ զարգացած քաղաքական կուսակցութիւններ, (որոնք եթէ ոչ միշտ ճշտութեամբ գիտեն, թէ ինչ են ցանկանում, յամենայն դէպս պարզ գիտակցում են թէ ինչ իրանք չեն կամենում), ձեռնարկունների համեմատաբար լաւ, իսկ արդիւնագործութեան որոշ ճիւղերում նոյնիսկ չափազանց լաւ կազմակերպութիւնը,—այդ բոլորը այնպիսի հանգամանքներ են, որոնք մեզանում պահանջում են քա-

դաքական գործադուլի հարցի նկատմամբ բոլորովին այլ վերաբերմունք, քան ներքնապէս խոր կերպով քայքայուած և սասանուած Ռուսաստանում. այդ չտեսնելու համար հարկաւոր է մանուկի միամտութիւն կամ թուղթ խաղացողի թեթեւամտութիւն:

Իրաւ է, մեր բանուորական դասակարգը շատ աւելի զօրեղ, անհամեմատ աւելի լաւ է կազմակերպուած և հոգեպէս աւելի բարձր է կանգնած. և նրա մասին առանց չափազանցութեան կարելի է ասել թէ յեղափոխական դրութեան մէջ նա անպարտելի կը լինէր: Սակայն յեղափոխական դրութիւն գոյութիւն չունի, և այդ չես կարող ստեղծել հրամայելով, ինչպէս և քաղաքական գործադուլով: Այդ գործադուլի իրրե հետեանք կարող է առաջ գալ և յեղափոխական դրութիւն, սակայն գուշակիլ այդ չի կարելի, եթէ ամբողջ մթնոլորտը առաջուց չի տոգորուած յեղափոխական էլեքտրականութեամբ, ինչպէս այդ տեղի ունէր Պետերբուրգում: Բայց չէ որ Գերմանիայում դրա նմանի անունն էլ չկայ: Ճիշտ է, խմորումը նկատուած է հասարակութեան և այլ խաւերում, բանուորական դասակարգից դատ ողին մուտք է գործում նաև այնպիսի շրջաններ, ուր անկարելի էր սպասել. ճիշտ է և այն որ մանր պաշտօնեաների մէջ (որոնց հաւատարմութեան վրայ է վերջի վերջոյ հաստատուած պետական ամբողջ շէնքը) օրէցօր աճում է համակրանքը դէպի սոցիալ-դեմոկրատիան, սակայն համակրանքի և ներգործական կողմնաւորութեան մէջ,—ինչպէս եղաւ մեր աչքերի առջև Ռուսաստանում,—ահագին տարբերութիւն կայ: Ընդհանուր գործադուլի ժամանակ բանուորները Գերմանիայում կարող են յոյս դնել միմիայն իրանց սեփական ոյժերի վրայ:

III

Եւ այնուամենայնիւ, կարող են հարց տալ ինձ, դու քարոզում ես քաղաքական գործադուլ: Այո, սակայն միայն որոշ դէպքի և որոշ պայմանների ներկայութեամբ: Ես քարոզում եմ ընդ. քաղ. գործադուլ իրրե բանուորականութեան կամքի հրդօր արտայայտութիւն, երբ նրանից ուզում են խլել նրան պատկանող կարևոր իրաւունքներ կամ երբ նա այլևս անկարող է ապրել առանց այս կամ այն դեռ չնուաճած իրաւունքի, բայց՝ ոչ իրրե յեղափոխական մի խաղ: Իրրե անհրաժեշտ միջոց բանուորականութեան, երբ նրա ձեռքում եղած մաքաւման միջոցները բաւականաչափ չեն, սակայն ոչ իրրե յեղափոխա-

կան բոմանտիկոս։ Ահա որտեղ է կարեւոր տարբերութիւնը, որ բաժանում է ինձ, ինչպէս և Ֆ.-էլմին և ուրիշներին, քաղաքական գործադուլի նորագոյն ագիտատորներին մի մասին։ Եւ չեմ հաւատում մի քաղաքական գործադուլի, որին իբրեւ նախարան պէտք է ծառայի՝ ամբողջ հասարակութեան պատեհաբար յայտարարելը, պարլամենտական կոուլի և պրոֆեսսիօնէլ շարժման ոչնչացումը, եւ ուղղակի այդպիսի գործադուլ համարում եմ դատապարտելի և կորստաբեր։ Եթէ այդպիսի պրոպագանդը տարածուած է bona fide, այդ դէպքում նա սպառնում է բանուորներին այնպիսի ձեռնարկութեան մէջ գցել, որ իրերի ներկայ դրութեամբ խոստանում է միայն խոշոր պարտութիւն, որ իր կողմից անբարոյականացնող ու կազմալքող կերպով կ'ազդի։ Նա ընդդիմադրութիւն է նախաստեղծում ամբողջ բուրժուական հասարակութեան կողմից, որ դեռ մեծ ոյժ ունի, որովհետեւ նրա յետեւից կանգնած է ամբողջ պետական ապարատը և անտարբերների ու բժամիտների վերջապահ գունդը։ Իսկ եթէ նրանք, որոնք քարոզելով տարածում են մասսային քաղաքական գործադուլներ և իրանք չեն մտածում լրջօրէն դրանց իրագործման մասին—այն ժամանակ դրանք գիտութեամբ կամ անգիտութեամբ կեղծ խաղք են խաղում այդ բառի ամենավատ իմաստով։ Մի ցնորքի համար նրանք վարկաբեկ են անում քաղաքական գործադուլի այն ձևը, որ հնարաւոր է և այժմ և կարող է անհրաժեշտութիւն դառնալ։

Քաղաքական գործադուլը, եթէ նա յեղափոխութիւն չ'ինչանակում, պէտք է գործադրուի միայն իբրեւ կոչ խղճի առաջ, իբրեւ միջոց արթնեցնելու արդարութեան բնած զգացմունքը։ Այդ գործադուլի միջոցով հասարակութիւնը սովամահ անելու միտքը բոլորից արդէն մխալ է ճանաչուած։ Նա միայն—տնտեսական գործիք է բարոյական (էթիկ) նպատակների համար։ Եւ գիտեմ որ այդ ասելով ըրիսկ եմ անում բողոք յարուցել և այն էլ ոչ միայն այն խմբակի կողմից, որ երեակայում է կամ ներկայացնում իրան իբր դասակարգային կոուլի արտօնեալ պաշտպան։ Դժբաղդաբար բանը այնտեղ է հասել որ դասակարգային կոուլը լուսաւորութեան միջոցից զառել է խաւարեցնելու գործիք։ Ի՞նչպէս է կարող, ասում են, դասակարգային ռազմիկը էթիկ զգացմունքների կոչ անել։ Իրաւ է, Մարքս, Լասոալ վկայ էին կանչում էթիկան, իրաւ է մենք էլ ենք այդպէս անում ընտրողական պայքարի ժամանակ, պարլամենտում, ամեն տեսակ դէպքերում, միայն թէ դրա մասին լսուով պէտք չէ։ Թէ ոչ յանցանք կը գործեն նոր մաքրուած վարդապետութեան դէմ...

Սակայն եւ չեմ ուզում վերջացնել այնպիսի տարածայ-

նութեամբ: Թէև քաղաքական գործադուլը նախ և առաջ խիղճ զարթեցնող կոչնակի նշանակութիւն ունի, բայց ժամանակին և կանոնաւոր կազմակերպուած, այսինքն այն ժամանակ, երբ զրգուտը խկապէս խոր կերպով տիրել է բանուոր դասին, երբ բանուորներն լցուած են իրաւունքի համար կռուելու այն զգացմունքով, որ բարձրացնում է մարդուն առօրեայ մանր հոգսերից շատ վեր, գործադուլը կարող է նմանապէս ծառայել իրրեւ մինչէ, թերեւ: Իսկ զժաքառումն է կարող մեր օրերում բանուորի համար աւելի մեծ նշանակութիւն ունենալ, քան ընտրողական իրաւունքների համար վարած կռիւր: Իսկ ընտրողական իրաւունքը միթէ իրականապէս սոցիալական յեղափոխութիւն չէ, շահագործումից աշխատանքի ազատագրութիւն չէ:

Բոժանտիկ է նա, ով չի ուզում այդ տեսնել: Ընտրողական իրաւունքը և պարլամենտական գործունէութիւնը, հէնց նրա համար որ դրանց ազդեցութիւնը մի օրում չի արտայայտւում, որ նրանք չեն աւերում օրէնքները և իրաւունքները ձեռք չեն բերում բռնութեամբ, շատերին թւում են չնչին՝ քաղաքական յեղափոխութեան համեմատութեամբ: Սակայն իսկապէս ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ յենուած պարլամենտարիզմը, անտեսապէս առաջադիմող հասարակութիւնների մէջ,—ինչպիսիքների հետ մենք այժմ դործ ունենք,—ամենաուղիղ միջոցն է՝ առանց արինհեղութեան, խնայելով կեանքը, առաջացնել յեղաշրջում, որ հին ժամանակներում ամբողջ սերունդների արինահեղ և կործանիչ կռիւների գնովն էր կատարւում: Պարլամենտի համար և պարլամենտում կռիւր—դա օրինական ձևերի մէջ պարփակուած ու մեր կուլտուրական հասկացողութիւններին համապատասխանող անդադրում օրգանական յեղափոխութիւն է, նա ամենաբարձր ձևն է դասակարգային կռուի: Եւ այդ պատճառով քաղաքական գործադուլը, որի նըպատակն է՝ ընտրողական իրաւունքի ապահովումը, մի գործէ, որի անունից բանուորները կարող են աշոգութեամբ դիմում անել ոչ միայն իրանց ընկերների դասակարգային գիտակցութեան, այլ և միւս դասակարգերի արդարադատութեան և խելահասութեան:

Լ. Բերնշտայն